Ավ. ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ՍԵՐԸ «ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՈՒՄ»

Մ. Գ. ՁԱՔԱՐՅԱՆ

Ավ. Իսահակյանի մեծ սերը «Հիշատակարանում» Շուշանիկ Մատակյանն է՝ Սահականուշյան դպրոցի սանուհին, բանաստեղծական խառնվածքի տեր էակ, որի նկատմամբ վեհ ու վերերկրային զգացմունքներ է տածել բանաստեղծը ողջ կյանքում։ Այլևայլ առիթներով նա իր ներաշխարհը համեմատում է Դանտեի Բեատրիչեի, Պետրարկայի Լաուրայի, Բայրոնի Մերի Չավորտի, Հայնեի Ամալյայի հանդեպ տածած հուզապրումներին։ Իսահակյանի «Հիշատակարանում» պահպանվել են սիրած էակի հետ բախտորոշ հանդիպման մանրամասները. որոնք օրագրի հեղինակը տարիներ անց, արդեն Շուշանի հետ գժտված և տենդագին հաշտության եզրերի որոնումներում, հոգևոր պոռթկման մի պահի արտագրել է՝ մեզ չհասած էջերից։ Զգացմունքները փոխադարձ էին, սրա վկայություններն էին սիրած աղջկանից ստացած նամակները, տեսակցություններից վերապրած բերկրանքն ու հոգևոր ցերմությունը. «Նրա» մեջ տեսնում եմ իմ հոգեկան պատկերը՝ որոշ գույներով. ես «Նրան» սիրում եմ՝ իդեալական սիրո ամենաընդարձակ ծավալով... Կյանքը թվում է ինձ անվերջ սեր... Սիրել-ապրել-տանջվել.—կյանքի խորհուրդը այս է»[1]։ Սա տասնվեցամյա պատանու կյանքի փիլիսոփայությունն է միաժամանակ, ուր նա տոկալու, ստեղծագործելու տենչը անբաժան է համարում սիրուց և ճշգրիտ նախադգացումով կանխորոշում սեփական կյանքի ուղին՝ սիրել, ապրել, տանջվել։ Ապրելու իմաստը ծայր է առնում սիրուց և ուշագրավն այն է, որ սերը պատանու գիտակցության մեջ ու պատկերացումներում միաձուլ է տառապանքի գաղափարին։ Կյանքի էության նույնպիսի ընկալումը բնորոշ է նաև սիրած էակին, որի վկայությունն է նրա նամակից կատարված մեջբերումը՝ «Տանջվել եմ ուզում...» (Հ, 23)։ Սեր-կյանք-տանջանք հոգեբանությամբ Իսահակյանը շփման եզրեր ունի Ա. Շոպենհաուերի և վաղ տարիների Ֆ. Նիցշեի[2] դավանած գաղափարախոսության։ Ուշագրավ է, որ տարիներ անց, ինչպես հավաստում է Կ. Համսունն «Պանը» վիպակի թարգմանության առաջաբանը, գրողին զբաղեցրել է նորվեգացի հեղինակի սեր-տանջանք զգացմունքային հարազատությունը՝ իր այլևայլ նրբերանգային ալեկոծանքներով, որոնցով էլ, ըստ էության, ողողված է «Հիշատակարանը». «Վեպի հերոսը, լեյտենանտ Գլանը, իր հակասություններով, զգացմունքային բախումներով, կրքերով, սիրատարփիկ հույզերով՝ մեկն է այն բազմաթիվ մարդկանցից, որոնք պայքարում և հաղթում կամ ընկնում են սիրո մթնոլորտում, և որոնք սիրում են առանձնահատուկ կերպով,—բուռն, հույզերի ոլորուն երևույթներով, ապշեցուցիչ հակասություններով, և որ գլխավորն է ու բնորոշը, տանջահարներով»*։

Իր զգացածը, վերապրածն ու մտածածը եվրոպական հոգևոր մտքի հետ համեմատությունը—զուգահեռների վկայությունն է թվում նաև «Նորա» բառի

---

1 Ավ. Իսահակյան, Հիշատակարան (այսուհետև՝ Հ), Երևան, 1977, էջ 20։ Գրողի երկերից մեջբերումները կտրվեն Ավ. Իսահակյանի «Երկերի ժողովածուներից» (Երևան, 1973—1979), փակագծերում կնշվեն հատորը՝ հռոմեական, իսկ էջը՝ արաբական թվանշաններով։

2 «Նա (Նիցշեն—Մ. Զ.) բոլորովին չի բաժանում այն տեսակետը, թե կյանքը տանջանք է և հետևապես պետք է ժխտել»։ «...Նա ներբողում, անգամ աստվածացնում էր կյանքը։ Կյանքը բարիքներից գերագույնն է» (Ե. Ֆրանգյան, Ֆ. Նիցշե և նրա փիլիսոփայությունը, Թիֆլիս, 1910, էջ 54, 11)։

* Կ. Համսուն, Պան, Լեյտենանտ Թոմաս Գլանի թղթերից, գերմ. թարգմ. Ավ. Իսահակյան, Թիֆլիս, 1913, էջ V։

գործածությունը և՛ «Հիշատակարանի» վաղ տարիներին, և՛ Շ. Մատակյանին ուղղված առաջին նամակում։ Թվում է, գրողն այստեղ նկատի ուներ ոչ այնքան գերանվան գրաբարյան քմահաճ գործածությունը (միշտ չակերտների մեջ), այլ փափկակյաց ապրած և դեպքերի բերումով սեփական հոգևոր-բարոյական և մարդկային նկարագրի ինքնահաստատման ճանապարհ ելած իբսենյան հերոսուհուն՝ Նորային։

Բանաստեղծի սերը, սակայն, ժամանակի հետ դարձավ շրջապատի բիրտ ու նյութապաշտ մտայնության դեմ։ Ինչպես չսպիացող վերք, գալարվող ցավ ու տառապանք այն վերապրել է ողջ կյանքում։ Օրագրային առաջին իսկ գրառումներից, անդրանիկ՝ «Ծրգեր ու վերքեր» ժողովածուից սկսած Իսահակյանի սիրային պոեզիան ներկայանում է հոգևոր տարբեր ալեբախումներով, վերացարկվում տարբեր հնչեցումներով՝ սիրո թրթիռ, տառապանք ու տանջանք, անկեղծ խոստովանանք, կարոտակեզ պոռթկում, ապա զգացմունքների հեղեղ՝ հոգի ծվատող անհույս մորմոք, կրակված սիրո բոց, հրդեհ, արնածոր սրտի վերք։ Օրագրային էջերի վկայությամբ, տասնամյակներ անց անգամ մերժված սերը բանաստեղծը վերապրում է իբրև գալարվող, հոշոտող ցավ ու ողբերգություն. «...Տիեզերքի խորությունն ուներ իմ սերը, որովհետև սիրտս խորն էր նույնչափ, և իմ տանջանքները անըմբռնելի էին ու մահաբեր... Սիրում էի արյունիս ամեն մի կաթիլով և մաքուր, ավելի մաքուր... Ես լացեցի՝ արյուն ու թարախ, քար ու արյուն լացեցի... Հոգոս վերքերը. հին, լայնաբերան վերքերը... Շուշիկը դաշույն ցցեց սրտիս մեջ, և մնում է դաշույնը. վերքը խորը, արնով լիք, և ապրում եմ ամեն քայլափոխում արյան կաթիլներ ծորելով. հետքս արյունով ներկվեց...» (Հ, 284, 281)։ Սիրո, կարոտի, սպասման մորմոքի միահյուսված զգացումը սիրած էակի ամուսնությունից հետո, ինչպես վկայում են մեջբերվող տողերը ևս, վերածվում են հոգևոր մոլեգին խռովքի, դառնաղի տառապանքի աշխարավորվող ելևէջների և լայնորեն բեկբեկվում նրա օրագրում և ստեղծագործություններում՝ իրական կենսագրական ազդակներով անդրադարձնելով նրա ըստ ամենայնի բարդ ու դրամատիկ հոգևոր կացությունը. «Հոգի կուտամ, հոգի տո՛ւր ինձ, իմ նազելի աշագեղ»։ (I, 10), «Սի՛րտ իմ, սպասի՛ր... մի՛ հուսահատվիր. Ապրի՛ր մինչ կա կյանք, մինչ նորոգ հույսի Կախարդ հորիզոն...» (I, 15), «Ես գրկեցի. ի՞նչ-արյան ծով» (I, 14), «Սիրտս խորունկ վերք ունի. Ձեռքդ մի դի՛ր—ա՜խ, չէ, ձեռքդ Անջնջելի կարնոտի» (I, 44), «Մայրիկ, հիվանդ եմ, սիրտս քրքրված. Տես, ո՞րքան խորն են հոգուս վերքերը Արնոտ ու խոցոտ»։ (I, 45), «Սիրտս բոց է, սիրտս խոց է...» (I, 70), «...Սիրտս-աբուն-ծով է» (I, 77)։

Օրագրային և բանաստեղծական տողերի զուգահեռը հավաստում է նաև գերդգայուն բանաստեղծի կորցրած սերը խոշտանգված հոգով վերապրելու ծանրածանր զգացումը, հանգամանք, որը բնութագրում է նաև Իսահակյանի մարդկային-անհատական նկարագիրը։ Նրա սերը ներկայանում է որպես առասպելական սիրո ըմբռնում՝ օժտված այնպիսի մի ճակատագրական ուժով ու զորությամբ, որը հանկարծակի հայտնվում է և իր կործանարար տարերքով գերի դարձնում մարդ արարածին։ Համոզվելու համար համադրենք ոչ միայն իրենց խոսքով, ոգով ու շնչով, հանգով ու երանգով, այլև մարդկային տարբեր խառնվածքներ ունեցող նրա ժամանակակիցների առաջին սիրերգերը, ուր խոցոտված արժանապատվությամբ առանձնանում է Իսահակյանի հուղաշխարհը (Հ. Հովհաննիսյան՝ «Միևնույն փիշտը մեզ մփացրեց», «Ի զուր է, հոգի՛ս, ի զուր, իմ հրեշտա՛կ» «Կույս գու չքնա՛ղ, կուզես ժպտա», Հովհ. Թումանյան՝ «Հոգուս հատոր», «Ների՛ր, ո՛վ կույս...», «Մի՛ տրոնիր», «Նրան», Վ. Տերյան՝ «Էստոնական երգ», «Fatum» «Անջատման երգ»)։

Սերը Իսահակյանի համար կյանքի իմաստ ու նպատակ է, որ ստեղծագործական արարման էր մղում նրան. «Ա՜խ, Շուշիկի համար էի ես ապրում. իմ կյանքի ծանրության կետն էր, նրա շուրջն էր պտտվում իմ ողջ գոյու-

թյունը-կրթվում, սովորում, գրում, տպում... երազում—միայն նրա համար... (Հ, 73)... նա իմ կյանքն է, ոգևորությունս է, իմ ամբողջ ձգտումները, երազները, տանջանքները նրա համար են, միա՜յն նրա համար...» (Հ, 76—77)։ Գրողի կարծիքով սերը բնությունից մարդ արարածին շնորհված ամենամեծ պարգևն է, և սիրած էակի հանդեպ տածած այսօրինակ մեծ, սակայն անպատասխան սերն էլ հիմք է տալիս կարծելու, որ այն եղել է Իսահակյան ստեղծագործողի և մտածողի գոյության նախապայմանը. արարում էր, մեծ էր, կյանքի խոչընդոտների դեմ պայքարում էր սիրած էակով ոգեշնչված։ 1902 թ. մարտի 22-ի գրառումը վկայում է գրողի որոշակի ազգվածությունը. եթե Դոստոևսկին և Տոլստոյը համոզված էին, որ գեղեցիկը, այն է՝ բարին, կփրկի աշխարհը, ապա Իսահակյանը գտնում է՝ սերը կփրկի աշխարհը. «Սիրուց հետո միայն մեռնել է պետք. սերը կյանքերի կյանքն է... ապրել և մեռնել. -մեռնել-ահա՜ սիրո վարձը. սիրուց հետո չարժե ապրել...» (Հ, 286)։ Սիրո նման արժեքավորումը, մարդու կյանքի էության բացահայտման առումով, Իսահակյանի մեջ ձևավորում է նոր աշխարհընկալում ու հոգեբանություն. մարդու կյանքը լիարյուն է, իմաստավորված, եթե նրա սիրտը տրոփում է սիրով։ Ինչպես սիրո, այնպես էլ սիրած էակի մեծարման ու աստվածացման մտայնությամբ և՛ «Հիշատակարանը», և՛ նրա պոեզիան բառապատկերային ատաղձով ու տրամադրությամբ խոր աղերսներ ունեն համաշխարհային սիրերգության հետ՝ «Երգ երգոցի», ազգային պոեզիայի հոգևոր ավանդների, եվրոպական վերածննդի վարպետների, հատկապես ասպետական պոեզիայի, ինչպիսին է «Տրիստան և Իզոլդան»։ Հայ մշակույթի հարազատությամբ Իսահակյանի ստեղծագործական աղերսները ձգվում են վաղ միջնադարից մինչև Սայաթ-Նովա՝ շրջանառության կոչելով լեզվառճական ու բառապատկերային հնարքներ, ինչպես քուչակյան և սայաթնովյան շնչով արարված բանաստեղծությունները։ Հիմնականը, սակայն, այստեղ նրանց արենակցական հարազատությունն է, որ ներկայանում է «բռնկված ու բռնված սիրո հրդեհով»[3] զգացմունքի վեհացնող ու սրբագործող բացահայտումների հոգեբանությամբ։ Այս առումով էլ Իսահակյանի սիրերգությունը հայ միջնադարյան պոեզիայի ավանդների զտարյուն ու ազնվագույն ժառանգորդն է։ «Հիշատակարանում» արդեն այսօրինակ զգացմունքների մասին խոհերը ծայր են առնում ազգային միջնադարյան մշակույթի խորքերից, այն մեծերի, որոնց համար «Սերը... Ապրելու համանիշ է, Կյանքի Կրկներևույթ»[4]։

Իր մեծ ու երազային սիրո հանդեպ տածած զգացմունքների այսօրինակ արծարծումների՝ «մաքուր ու հրեշտակային» (Հ, 73), «...Շուշիկը, որ ...փեհ է, սուրբ է, գերմարդկային, հրեշտակ, աստվածային, չունի կրքեր...» (Հ. 75) բանաստեղծական տրամադրությունների զուգահեռն է Իսահակյանի թույլ ջրանիկով վրձնած, լազուր թևերով բարձունքից իջնող կույտի պատկերը.

...Տեսնում եմ ահա՜, որ բարձունքներից
Իջնում է մի կույս, լազո՜ւր թևերով,
Որ զարթնեցրնե, թրոցնե հոգիս... (I, 154)։

Նման սերն էլ, բնականաբար, թույլ չէր տալիս հեղինակին «երկրային» հայացքով նայել Շուշիկին. «Ես չէի ձգտում նրան համբուրել—այդ միտքը ինձ վիրավորում էր. իսկ մի տուփական ենթադրություն՝ ինձ հուսահատեցնում» (Հ, 172)։ Սիրած էակի հանդեպ իր հոգու ներսում անգամ «երկրային» վերաբերմունքով գրողը վախենում էր աղարտել նրա մաքրությունը։

Իր մեծ սիրո համար ապրած հոգևոր տվայտանքի առումով «Հիշատակարանը» խոր հարազատություն ունի Գյոթեի «Վերթերին» և՛ տրամադրության, և՛ արտահայտչամիջոցների առումով։

---

[3] Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1951, էջ 375։
[4] Գ. Սևակ, Սայաթ-Նովա, Երևան, 1969, էջ 182։

Նախնական տարիների օրագրային գրառումների վկայությամբ Շուշիկը ռոմանտիկ-բանաստեղծական կերպար է։ Իսահակյանը, չնայած այդօրինակ մեծ սիրուն, այնուամենայնիվ, սթափ ու զգաստ հայացքով է գնահատում նրա նկատմամբ տածած իր զգացմունքները, աշխատում հաշտվել նրա հետ, հարթել իրենց մեջ ծագած տհաճ միջադեպը, սակայն միաժամանակ խոստովանում. «...ով գիտե, կյանքը պեսպեսացոլն բան է,— «նա» նորից սիրե ինձ և դարձնե կորցրած սերս։ Այս խոսքերը գրում եմ, մազի չափ հավատ չընծայելով ճշտությանը» (Հ, 53)։ Իսահակյան մտածողը գիտակցում է, որ Շուշիկի հանդեպ տածած իր սերը ինքն է մեծ և գեղեցիկ երազանքներով օժտել և 1893 թ. գրառման մեջ արձանագրում է. «Սիրո դեպյուտս անհաջող, կարճատև անցավ... գուցե երկրորդին, գուցե ե երրորդին կարողանամ սիրել, սիրել ավելի տաք և բուռն, թո՛ղ սիրտս նորից բաբախե, ում համար որ ուզում է, միայն՝ թո՛ղ բաբախե սիրով» (Հ, 38)։ Նա համոզված էր, որ փոխադարձ սիրո հույսը անիմաստ է, ավելի ստույգ՝ բացառվում է, սակայն ստեղծագործող Իսահակյանը չի ցանկանում հրաժարվել նրանից, համոզված, որ միայն տառապող հոգին է ընդունակ արարելու, ուրիշի զգացմունքները, տվայտանքը հասկանալու։ Այս պատճառով էլ նա Շուշիկի հանդեպ տածած իր սերը դարձնում է գաղափարախոսություն և ծավալում ողջ «Հիշատակարանում», մյուս ստեղծագործություններում։ Գրողը խորապես գիտակցում է, որ Շուշիկի նկատմամբ զգացմունքները իր համար ո՛չ սկիզբ են, ո՛չ էլ վերջ, նա նորից է սիրելու, սակայն չի կարող հրաժարվել իր իդեալ Շուշիկից և այդ սկզբունքով էլ առաջնորդվում է ողջ կյանքում։ Այն փաստը, որ մարդ Իսահակյանը, իրոք, տարբերել է Շուշիկի սիրո իդեալը և այլընտրանքը, հստակ վկայում է 1893 թ. մայիսի 26-ի գրառումը. «Որքա՜ն դատարկ կլիներ կյանքը, եթե չլիներ նրանում սիրո դրաման, կոմեդիան, տրագեդիան, կատաստրոֆը... Որքա՜ն սերը մխիթարող է, ոգևորիչ է, հուսագրող է, բարձրացնող է. բացասական դեպքում՝ որքան էլ հուսահատեցնող, տանջող, մաշող, բայց և այնպես միմիայն սիրո համար, միայն սիրո համար, միայն սիրո համար արժե ապրել։ Ես երջանիկ եմ, որ ունեմ սիրո պես Աստված, որին պաշտում եմ, հավատում եմ և, չնայելով, որ այժմ կորցրել եմ սերս, բայց գուցե ապագայում նույն ուժով ուրիշին սիրեմ, նույնիսկ «նրան», և փոխադարձաբար. ավելի ուժգին, քան առաջ և այժմ... նորից սիրվել նրանից՝ խիմերա է...» (Հ, 54)։ Իսահակյանի ներքին երկվության վկայությունն է 900-ական թվականների սկզբներին կատարած հետևյալ գրառումը, որը վերաբերում է իր սիրո առարկայի իրական-մարդկային նկարագրի և իդեալականացվածի մասին խորհրդածություն ինքնախոստովանանքին. «Ոչ թե սիրում էի, այլ պատկառում, պաշտում էի, շատ էր ինձ վեհ ու արքայական թվում. լուռ, ծանր, վեհապանծ—բարձրանում էի նրա շնորհիվ ու մաքրվում... բայց իրոք նա ինձ դուր եկավ—մի հիմար, խորամանկ կոկետկա, վատ գրքեր կարդացող... բութ սրախոսող, սրա-նրա երեսին ժպտացող, քարամիրտ, անտարբեր մի դամա։ Ահա իլյուզիան և ահա ռեալականությունը։ Ամեն բան մեր հոգումն է, դուրսը ոչինչ չկա, սուբյեկտ, ինտերես ինտիմ—ուրիշ ոչինչ»[5]։ Այս տրամադրությամբ է շաղախված նաև «Այն վառ երազ էր...» բանաստեղծությունը.

Այն վառ երազ էր...
Մաքուր հավատով ես քեզ սիրեցի.
Սուրբ ցնորքներով, լուռ աղոթքներով
Ես քեզ պաշտեցի։
Հոգիս տոգորված անհուն վեհությամբ
Քո չքնաղ կրծքում—այդ սրբարանում

5 Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (այսուհետև՝ ԳԱԹ), Իսահակյանի ֆ., Ա 26—II։

Կյանքիս իդեալը, վսեմ իդեալը
Ես օրհներգեցի...
Բայց երազն անցավ.
Դառնությամբ տեսա, որ իմ ջերմ պաշտած
Աստված—իդեալս կուռք էր կույր-կրքի։
Եվ երազն անցավ,—սոսկ կուռք էիր դու[6]։

Ստեղծագործող Իսահակյանին Շուշիկի թեկուզ միայն ժպիտը արարման էր մղում. «...սիրո ժպիտը հիվանդ դեմքի վրա ցոլաց. նա ժպիտ չէր՝ պրոմեթեոսյան կայծ —սեր-հույս... Անցավ, անցավ այդ ...Անիծվա՛ծ մարդիկ, գազա՛ն մարդիկ...» (Հ, 38)։ Սակայն սիրած աղջկա ժպիտը և նոր ծագող զգացմունքները կարողացան սպանել նյութապաշտությամբ տարված աղջկա հարազատները[7], և գրողի նախատինքի խոսքերը ուղղված են նրանց։ Շուշիկի հանդեպ տածած իր զգացմունքները Իսահակյանը «կեսի» փիլիսոփայությամբ է մեկնում. սիրած էակին իր կեսն է ընդունում ու ներկայացնում։ «Ես»—«դու» հարաբերություններն այս դեպքում արդեն օրագրում ներկայանում են ոչ իբրև մենախոսության, այլ՝ երկխոսության ձևով, որին՝ Շուշիկի կես «ես»-ին, նա իր խոհերն ու մտորումներն է հաղորդում։ Միշտ երկուսն էլ գիտակցաբար հասկանում, լրացնում, ամբողջացնում են միմյանց՝ դրանով իսկ ավարտուն դարձնելով օրագրի հեղինակի ինքնահաստատման ընթացքը։ Ստանալով սիրած կնոջ մահվան գույժը՝ 1944 թ. հոկտեմբերի 28-ի նամակում վավերացնում է. «Հուր հավիտյան, մինչև մահ, գերեզման չեմ մոռանա ես նրան։ Հիմա կարող եմ ասել, որ իմ կեսը մեռել է» (VI, 368)։ Սիրած կնոջ հանդեպ տածած հուզապրումների հզորությունը Իսահակյանը համեմատում է տիեզերքի հետ։ Սիրած կնոջը համարելով բնության ամենաչքնաղ կաթիլը՝ նա տիեզերքը ընկալում է նրանով. «...Տիեզերքի պես ես սիրեցի... Շուշիկին» (Հ, 154)։ Երբեմն էլ, ինչպես մեջբերվող գրառման մեջ, սիրած կնոջն ուղղված երազաբաղձ խոսքում հեղինակն արդեն չի ցանկանում իր զգացմունքները առարկայացնել՝ Շուշիկի անունը չկա։ Հոգեբանական այսօրինակ վիճակը պայմանավորված է անհասանելի սիրո մեկնությամբ. «Ես քեզ սիրում եմ, և այս սերս ինչպես մի աղոթք՝ դեպի քեզ եմ առաքում, և իմ սերս ոչ մի ցանկություն չունի. ես չեմ ուզում քեզ համբուրել, քեզ գրկել, քեզ տիրել. ես ուզում եմ, որ դուն աստղի պես շողաս երկնքում և որպես ցնորք թափառես իմ հոգու վերև» (Հ, 252)։

Իսահակյանը բազմիցս իր սերը համեմատում է աստղերի հետ։ Մի դեպքում նա աստղերի մեջ փնտրում ու գտնում է սիրելիի դիմագիծը. «Ես քեզ տեսա աստղերի մեջ», այլ դեպքում նրանով չափում սեփական զգացումների հզորությունը. «Աստղ ու երկինք-սերս ու սիրտս ոտներիդ տակ փռեցի...» (I, 135)։ 1895 թ. գրված «Անհուն երկնում աստղերն անշեջ» բանաստեղծության մեջ և օրագրային գրառումներում հեղինակը մեկնում է նաև սեր-աստղ համեմատության ուրույն ըմբռնումները. սիրած աղջկա անհատական, մարդկային հատկանիշները՝ «խորն... Շատ բա՜րձր ու պայծառ» (I, 48)։ «Հիշատակարանում» այս խորհրդածությունները հանգում են կորցրած սերը, թեկուզ անհաս աստղի կերպարանքով վայելելու զգացողության. «Ես ուզում եմ, որ դուն աստղի պես շողաս երկնքում և որպես ցնորք թափառես իմ հոգու վերև։ Դու աստղի պես շողաս իմ հոգում և ինձ լույս տաս...» (Հ, 252)։ Աստղ-սիրած էակ համեմատության ուրույն ու հետաքրքիր եզրեր կան XX դարասկզբի գրականության մեջ։ Ն. Գումիլյովի «Կապույտ աստղին» բանաստեղծությունների շարքը, օրինակ, նվիրված է կնոջը՝ Ա. Ախմատովային և հատկանշական է այս առումով. եթե Իսահակյանի այդ զուգահեռը

---

6 Ավ. Իսահակյան, Հայդուկի երգեր, Երևան, 1990, էջ 124։

7 Իսահակյանի «Հիշատակարանում» Շուշիկի մոր հանդեպ ունեցած զայրույթն ու նախատինքը հեռու է քուչակյան արծարծումներից։

խորհրդանշվում է երազային-երկնային հուզապրումներով, ապա ռուս գրողի հուզաշխարհում այն պայմանավորված է նույն կենսագրական իրողությամբ, թելադրված փոխադարձ սիրո ու վայելքի իրական հոգեբանությամբ[8]։

Սիրած էակին միշտ իրենը համարելու փափագն ու երազանքը այնքան է անսահման ու անհույս, որ հուսահատ բանաստեղծին երբեմն հանգեցնում է միայն մահվան մեջ հնարավոր անբաժանելիության գաղափարին. «Ես մահ լինիմ, քեզ գրկեմ—դու ինձ պատկանիս, հավիտյան իմը լինիս—ո՛չ ոք չխլե քեզ իմ ձեռքից։ Մահ լինիմ, որ հավերժապես իմ ձեռքում լինիս, ինձնից անբաժան...» (Հ, 207)։ Այս տրամադրությունը իր երանգ-նրբերանգներով ծավալվում է «Հավերժական սերը» պոեմում։ «Հիշատակարանում» իսահակյանական սիրո մասին խորհրդածությունների ամփոփումն է թվում 1895 թ. գրառումը. «Սիրո զգացումը մարդկային սիրտը քնքշացնում, նրբացնում է, զարգացնում է գեղեցկության ձգտումն ու ճաշակը, սրում է զգացմունքները դեպի նուրբը, ղգայունը, թույլը, գունատը, աղոտը, նվազը. սերը բացառում է ուժը, զորությունը, կորովը և ազատությունը, նույնիսկ իրավունքն ու կամքը» (Հ, 170—171)։ Այս մեկնության մեջ ուշադրություն է գրավում հատկապես վերջին միտքը. երիտասարդ Իսահակյանը կամքը ենթարկում, ստորադասում է զգացմունքին, և հարցի նմանօրինակ դրվածքը «Հիշատակարանում» հազվադեպ մտայնության արդյունք է, քանի որ, ինչպես հայտնի է, հեղինակը անհատի կամքին է ենթարկում զգայական համարյա բոլոր երևույթները։

1901 թ. դեկտեմբերի 27-ի (Կաղզվան) գրառման մեջ անդրադառնում է Շուշիկի և նրա ամուսնու հետ իր վայրկենական հանդիպմանը։ Իսահակյանը չի տալիս անունը՝ «սիրածս աղջիկը՝ իր ամուսնու հետ», բայց նրա ապրած հոգևոր տվայտանքի ու հոշոտող ցավի անդրադարձը հուշում է, որ միայն Շուշիկը կարող էր լինել։

1897 թ. հուլիսի 15-ի գրառման մեջ հեղինակը անդրադառնում է կնոջ մի նոր հոգեբանական վիճակի՝ արարքի գիտակցմանն ու զղջմանը։ Տարիներ առաջվա իր մերժումը սիրած կինը մեկնում է հետևյալ կերպ «...Ինքը մեղավոր չէր, փոքր աղջիկ էր...» (Հ, 240)։ «Փոքրիկ աղջիկ» Շուշիկի պատճառած ցավն ու մորմոքն արդեն բուժել է փորձում հասուն կինը. «...Շուշիկը ինձ ասաց. «Ես պատրաստ եմ քեզ բժշկելու համար ամեն միջոց, ինչ որ կախված է ինձնից՝ գործ դնել քեզ համար...» (Հ. 241)։ Սիրած էակի այս վարմունքը, ինչ խոսք, այնքան է հուզում գրողին, որ նա հաջորդ գրառման մեջ ներկայանում է զգայական հզոր լիցքով ու ոգեշնչվածությամբ, բնության տիրող զգացումով, որն աշխարհը, ծովը, տիեզերքը, բնության բոլոր երևույթները մեկնում է հաղթական վերելք ապրող տրամադրությամբ. «Ես եմ տիեզերքի երգն ու կյանքը. տիեզերք, որ իմ մեջ տրպում է, խորհում է, զգում է—նրա փառքը իմ մեջ է—ես եմ նրա փառքը... Իմ հոգին նրա վայրենի, ազատ ուժն է... Ես տիեզերքի կոկ, տաշված, պերճ, ճոխ, չքնաղ, նազերի բյուրեղն եմ...

Ես վայրենի, ազատ ուժ եմ...» (Հ, 241)։ Ներումն խնդրող կնոջ այս վարմունքը հոգեբանորեն մեղմում է հեղինակի մինչ այդ մերժված հիվանդագին «ես»-ը, և նրա տարիների տառապանքը հոգեբանական այդ խոստովանությամբ գոհացում է ապրում. «Ինձ համար այժմ ամեն բան պարզ է. Շուշիկը ինձ սիրում է. ինձ պատրաստ էր ո՛չ թե միայն համբույր տալ, այլև <...> իմ ետևից գալու։ Ես այժմ շվարած եմ...» (Հ, 242)։

Կնոջ էության մեկնության հարցում Իսահակյանի «Հիշատակարանը» միանշանակ պատասխան չի տալիս, սակայն կնոջ գնահատման երկու արժեք միշտ առկա են հեղինակի գիտակցության մեջ՝ կինը որպես ընկեր և սոսկ հաճույքի, վայելքի զույգ։ Վերջինիս գրողը երկրորդական տեղ է հատ-

---

8 Տե՛ս Н. Гумилев, Избранное, Красноярск, 1989, с. 241.

կացնում. գերապատվությունը օրագրում «մաքուր ու մեծ սիրով լքնաղ» կնոջ կողմն է. «Սերը, սեռական սերը պիտի վերածվի ընկերական, մաքուր, խելոք ու բարձր սիրու»,—փակ այն գրողի կարծիքով. «Բոլոր սերերի մեջ ամենից բարձրը, հաստատը, ամուրը, խելոքը, խորը, մարդկայինը, հերոսայինը, գերբնականը—ընկերական սերն է...» (Հ, 169)։ Ի տարբերություն Գյոթեի երգած հավերժ կանացիության կամ դարասկզբի սիրերդության-ներ բնորոշ սալոնային կանանց փառաբանման մոտիվների, Իսահակյանը գովերգում է կին-ընկերոջ սերը։ Այս առումով էլ «Հիշատակարանը» և գրողի սիրային թեմայով ստեղծագործությունները աղերսվում են մեծ անգլիացու՝ Վ. Շեքսպիրի «Սոնետներին»։ Խոսքը սիրո զուտ մարդկային-ընկերական[9] հուզապրումներին է վերաբերում, և հայտնի է, որ Շեքսպիրի սիրային սոնետների գերակշռող մասը՝ առաջին 127-ը, նվիրված են երիտասարդ ընկերոջը, իսկ 127—154-ը՝ «թուխ կնոջը»։ Իսահակյանի մոտ կան խոհեր, բանաստեղծական տողեր, պատկերներ ու տրամադրություններ, որոնցով նա հոգեհարազատանում է Վ. Շեքսպիրին։ Դա մերթ սիրած էակին ստրուկի պես հնազանդ ծառայելու (սոնետ № 151)[10], նրան միայն և միայն երազի ու երևակայության մեջ գգվելու ու վայելելու մտայնությանն է վերաբերում (№ 87) կամ սիրո անբուժելի հիվանդության մասին (№ 147) խորհրդածություններին, որոնք առավել խտացված գույներով, հոգեբանական-խորքային բացատրություն-մեկնություններով շրջանառության է կոչում հայ բանաստեղծը «Հիշատակարանում»։

Իսահակյանն իր օրագրում սերունդներին է հանձնել նաև իր ըմբռնումներն ու պատկերացումները ընկերական սիրո մասին, համաձայն որի, այն ամենաբարձր ու մարդկային սուրբ զգացումն է. «...Մի սեր, որ մենք տածում ենք իրար այն ժամանակ, երբ զգում ենք, որ այն էակը բարձր է, ազնիվ, խորը, խելոք, սուրբ՝ մեր ամենալավ իդեալներին համապատասխան։ Այստեղ միս, արյուն չկա» (Հ, 169)։

Մի այլ առիթով նամակներում արդեն, սիրած աղջկան նա դրում է. «...Սիրո գինը սերն է. և իմ սերը այդպիսի գին է պահանջում. ընդհանուրակ ես այդ գինը տալու—մենք ընկերներ կմնանք...» (VI, 74)։ Իսահակյանի «քայլող սիրուն» ուղղված այսօրինակ տրամադրությամբ են ողողված դեռևս վաղ տարիների ստեղծագործությունները։ Այդ «ամենավեհ մտքով հասկացված» ընկերական զգացմունքի տրամադրության հետքերն ենք գտնում դեռևս 1892 թ. Ալեքսանդրապոլում գրված «Դավաճանության օրերում» (Հ-ի պատկերի դիմաց) բանաստեղծության մեջ.

Ինձ չ՝ճանաչեցի՞ր, ընկեր նազելի,
Իմ մաքուր սերը անհոգ դիմակով
Քո ողջունելիս՝ մատնեցիր ծաղրի։
...Ա՜խ, անգին ընկե՞ր,
Չ՝նկատեցի՞ր իմ ջերմ արցունքը[11]։

Բայց այս մեծ սիրուն՝ Շուշանիկ Մատակյանին էր նվիրված Իսահակյանի առաջին տպագիր բանաստեղծությունը՝ «Ծաղիկ էի նորաբողբոջ...»[12], որից սկսած այլևայլ ալեբախումներով, երանգ-նրբերանգներով ծավալվող սիրային թեմայով գրված ստեղծագործություններում գրողը վրձնում է սիրած

---

9 Սայաթ-Նովայի պոեզիային նույնպես բնորոշ այս երևույթը ժամանակին արձանագրել է Հ. Թումանյանը, ըստ որի երգի «...Սերը նման է ընկերության, ընկերությունը՝ սիրո» (Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1951, էջ 259)։

10 Վ. Շեքսպիր, Սոնետներ, Երևան, 1961։

11 ԳԱԹ, Իսահակյանի ֆ, I—II։

12 Այս բանաստեղծությունը «Հին—նոր երգ ու վերքերից» գրքում (Բաքու, 1902) վերնագրված է «Նվեր օր. Շ. Մ.-ին»։

աղջկա դիմանկարը՝ վերածննդի վարպետներին վայել կատարելությամբ՝ լույս, վարդ երեսով ու նազուկ մեջքով, ծով-ծով մազերով, վարդի պես բուրող, գիշերվա պես սև ու խորհրդավոր աչքերով։

Ավանդապահ վարքուբարքի տեր ընտանիքի զավակի, ժամանակի զարգացած մտավորական միջավայրից սերած Շ. Մատակյանը հեղինակն է բանաստեղծությունների, հրապարակախոսական հոդվածների ու թարգմանությունների։ Նրա չափածոյում կարելի է որսալ Իսահակյանի ոչ միայն բանաստեղծական տրամադրությունների ու պատկերների հարազատությունը, այլև օրագրային գրառումների զուգահեռներ. «Ես ինչպես մի մրրիկ՝ լի կյանքով ու վշտով՝ եկա Շուշիկի մոտ—նա ապառաժ էր, ժայռ էր. բախեցի նրա կրծքին, շաչեցի ու շառաչեցի մոտը... մնաց չոր, ամուր ու ժայռ-քար... Իսկ երբ հեռացա՝ միայն մի քանի կաթ արցունք... ընկած տեսա նրա քարկրծքի վրա» (Հ—90)։ Ահա և Շ. Մատակյանի չափածոյի համեմատություն-զուգահեռները. «Սիրտս... ժայռ է դարձած», «Ու սիրտս ժայռ է շատ հին դարերից», «Ես մի ժայռ եմ չոր-ցամաք»[13]։

Իսահակյանի «Մայրիկ, հիվանդ եմ, սիրտըս քրքրված.
Տես, ո՜րքան խորն են հոգուս վերքերը Արնոտ ու խոցոտ» (I, 45) տրամադրությունը սիրած էակի մոտ այսպիսին է՝

Ահա նայիր, մայր իմ, սիրող,
Այս իմ խոր-խոր վերքերը... (Շ, 45)

Շ. Մատակյանի չափածոն շաղախված է իր ապրած վշտի, հոգևոր տառապանքի, կորցրած մեծ սիրո ու երջանկության շուրջ մորմոքուն տրամադրություններով։ Ինչպես Իսահակյանը օրագրում, նա նույնպես իր հոգու մորմոքն ու վիշտը պահ է տալիս ծովին.

Մի վիշտ ունեմ, նա շատ հին է,
Եվ ծովին է հանձնված.
Ո՜վ ալիքներ, մի՛ վրդովեք
Եվ վիշտս հանեք երևան (Շ, 40)։

Մի դեպքում անկեղծ ու անմիջական, այլ դեպքում արդեն միջնադարյան սիրային պոեզիայից փոխառնված այլաբանական ձևով ու եղանակով բանաստեղծուհին ողբում էր կորցրած մեծ սերն ու երջանկությունը։ Կորցրած մեծ սիրո համար ապրած ցավի, տառապանքի, անամոք մորմոքի տրամադրությամբ է ողողված «Հիշատակարանը», ուր համարյա անընդմեջ այդ հիշատակումը ծավալվում է օրագրով մեկ։ Չափածոյում արդեն նրա ապրած մարդկային վիշտն ու տառապանքը ներկայանում են քերթ մակդիր կամ համեմատություն։ Գրողի սիրո ու խանդի ծառացումները ներկայանում են դաժանի ու զոհի հակադրությամբ, որը առկա է նաև հայնեական տողով սկսվող «Այսօր ձեր տուն մեծ խնջույք կա»[14] բանաստեղծության մեջ, ուր գերմանացի գրողի նման Իսահակյանը ստեղծում է սիրած աղջկա հարսանիքի օրը լուսամուտի տակ կանգնած մերժված սիրահարի կերպարը.

Դու դահճի պես ա՛լ ես հագել,—
Ալըդ շողքն է իմ արյան... (I, 122)։

Ինչպես նշվեց, տարիներ անց Իսահակյանի երազային սերը զղջում ու ներում է խնդրում իր վերաբերմունքի համար, պատճառաբանելով, որ տարիքի բերումով ի վիճակի չի եղել ըստ արժանվույն գնահատելու նրա զգացմունք-

---

[13] Շուշանիկ Մատակյան, Չափածո ու արձակ էջեր (այսուհետև՝ Շ), Երևան, 1975, էջ 24—36։

[14] Հ. Հայնեի ստեղծագործությունների առաջին տողերով է Իսահակյանը գրել նաև «Սի՛րտ իմ, սպասի՛ր», «Շառաչելով մի վառ աստղիկ», «Ո՞ւմ անտառով լուռ ման կուգամ» բանաստեղծությունները։

ների ուժն ու անկեղծությունը։ Թվում է՝ իրական-կենսագրական այս ազդակներով է թելադրված 1901 թ. գրված «Ժեռ, սև քարը սրտիս վրա» ստեղծագործությունը, որը ողբերգական ծալքերով ու խորքով առնչվում է Հայնեի «Ցնորքներ ու մորմոքներ» քնարական ինտերմեցցոյի «Մութն էր իջել աչքերիս» բանաստեղծությանը[15]։ Այս հոգեհարպղատությունը ծայր է առնում ստեղծագործական մտահղացումից. սիրուց մերժված և գերեզմանում ամփոփված ասպետներին այցի են գալիս և փորձում կյանքի կոչել իրենց սիրած էակները։ Կենսագրական ճշմարտապատում տպավորություն ստեղծելու նպատակով էլ քնարական հերոսները ներկայացված են իրական անուններով՝ Շուշան, Հայնրիխ։

Գերմանացի քնարերգուին Իսահակյանի օրագիրը հարազատ է բազմիցս շրջանառության կոչած «սրտի խորունկ վերք», «արյունոտ, արնածոր վերք» բառապատկերներով կամ կորցրած սիրո մորմոքը մոր գրկում փարատելու զգացումով («Մորս՝ Բ. Հայնեին», Ավ. Իսահակյան՝ «Մայրիկիս», «Մայրս տեսավ ինձ շատ տխուր»)։

Հայնե-Իսահակյան ստեղծագործական առնչությունների հիմքում, թվում է, ընկած են ոչ միայն նրանց ռոմանտիկ բանաստեղծական խառնվածքը, վերջինիս Գերմանիայում ուսանած լինելու հանգամանքը, այլև ինքնակենսագրական զուգադիպությունները նույնպես։ Ե՛վ Հայնեն, և՛ Իսահակյանը տիրել են իրենց զարմուհիներին[16], իսկ վերջինները գերադասել են նյութական ապահովվածությունը։ Երկու բանաստեղծներն էլ իրենց սիրած էակների նմանությունը որոնել ու գտել են նրանց կրտսեր քույրերի մեջ (Ամալյա-Թերեզ Հայնե, Շուշանիկ-Աննիկ Մատակյան)։

Երազային ցնորք Շուշիկը 1896 թ. գրառումից սկսած «Հիշատակարանում» ներկայանում է արդեն իրական, շոշափելի գույներով։ Փետրվարի 11-ին նրա հետ երկար զրուցելուց հետո բանաստեղծը օրագրում հավաստում է. «...Շուշիկի հետ շա՜տ խոսեցի... Բայց չեմ սիրում է՛լ նրան, հիացմունքն ու մշուշը անցել է, մնացել է միս-ոսկոր և մարմին Շուշիկը. քիչ է մնում, որ տուփանք տածեմ նրան... Վա՜յ, վա՜յ» (2, 207)։ Այսօրինակ ռեալ ու իրական ընկալմամբ էլ, թվում է, այս գրառումից հետո սիրած էակը ավելի քան խորհրդանշում է իր մանկությունը, հայրենիքն ու երիտասարդությունը։ Թերևս այս պատճառով էլ Շուշիկը վարպետի ստեղծագործություններում միշտ երիտասարդ է, գեղեցիկ ու հրապուրիչ։

«Հիշատակարանում» կան նաև այլ կանացի կերպարներ, որոնց էությունը բացահայտվում է միայն օրագրի հեղինակի մենախոսության միջոցով։ Իսահակյան ստեղծագործողի միտքը նրանցով զբաղվում է սոսկ որպես տղամարդ՝ Զարուհի, Հռիփսիմե։ Իսահակյան-Զարուհի առնչություններում. օրինակ, նկատելի են կին և տղամարդ փոխհարաբերությունների նոր կտրվածքներ։ Նրանց մտերմությունը, օրագրային գրառումների վկայությամբ, սոսկ ֆիզիկական եզրերով է պայմանավորված, և այդ պատճառով էլ նրանց միջև ցանկացած բախումն ու ընդհարումը պարզապես նոր դիմակի է հանգեցնում։ Հոկտեմբերի 27-ի ծավալուն գրառումները (1897) ուղեկցվում են Շուշիկի մասին տեղեկություններով, և այս հանգամանքն էլ հասկանալի է դարձնում գրողի նմանօրինակ կեցվածքը. նա Շուշիկին գիտակցաբար ընդունում և միշտ ներկայացնում է առանց դիմակի, և այդ է նաև պատճառը, որ կյանքում, ինչպես և «Հիշատակարանում» մորմոքուն ցավ է ապրում նրա համար, մինչդեռ Զարուհու հետ ունեցած փոխհարաբերությունները՝ դիմակով թելադրված, որևէ ցավ, մորմոք, առավել ևս տվայտանքի զգայական լիցքեր չեն պարունակում. «...Շուշիկը ինքը իր կամքով բացատրեց տարիներ առաջ իր վարմունքը իմ սիրո նկատմամբ... Նույն երեկոյան կրվեցա Զարուհու հետ. օրիորդը ինձ վրա նայում էր կես-արհամարհանքով...

15 Հ. Հայնե, Երկեր, հ. 1, Երևան, 1958, էջ 132։

16 Ամալյա Հայնեն բանաստեղծի հորեղբոր աղջիկն էր, իսկ Շուշանիկ Մատակյանը՝ Իսահակյանի մորաքրոջ թոռը։

ես իրեն ասացի, որ դիմակավոր եք, որ լավ մարդու հերն անիծած, վատը արդեն վատ է։

Էլ չենք խոսում իրար հետ. ես հեչ չպիտի զիջեմ, թո՛ղ նա զիջե... Ինձ խորը վիրավորել էր. ես էլ հարգում էի, շա՜տ հարգում էի օր. Զարուհուն— այդ վարմունքն ինձ այնքան զայրացրեց, որ ես ստիպված եղա նրան ասելու, որ կանայք դիմակներ ունեն, ակնարկելով օրիորդին...» (Հ, 240—241)։

Կնոջ առեղծվածային էության բացահայտումը միշտ էլ զբաղեցրել է Իսահակյան տղամարդուն և արվեստագետին։ 1925 թ. (5. X, Վենետիկ) գրառման մեջ գրողն արդեն անդրադառնում է կնոջ հանելուկային էությանը և սիրո սեփական իդեալի ըմբռնման բացահայտումներին։ Եթե Իսահակյանը իր երեք հասակներից առաջինում ապրել է սիրո մերժման տառապանքը, երկրորդում կնոջը վայելել ոչ միայն իբրև ընկերոջ, որդու մոր, այլև կանանց համակրանքը ընդհանրապես, ապա երրորդ հասակում, գտնվելով իր հիսնամյակի շեմին, նա հոգու աչքերով տեսնում և նկարագրում է անծանոթ կնոջը։ Իսահակյանն այստեղ, ըստ էության, քննարկման է դրել կնոջ իդեալի իր պատկերացումները՝ որպես գեղեցիկի բացառիկ կատարելություն, քանի որ նրան տեսել էր միայն մի ակնթարթ։ Հմայիչ էր նա ոչ միայն արտաքինով. «Ո՛չ, սա կին չէ։ Սրբապղծություն է այս որակումը. սա գերմարդկային է։ Ի՜նչ սլացիկ հասակ, ի՜նչ ազնվություն, և ինչպիսի՜ աչքեր—սուրբ, քնքուշ, սրտախոս։ Հոգեղեն է սա, անմարմին, կամ երազի մարմին, անուրջ» (Հ, 364—5)։ Գրողը օժտել է նրան և՛ մարմնական, և՛ հոգևոր գեղեցկություններով։ Այս գրառումը նա կատարել է խոհափիլիսոփայական ճանաչողության այնպիսի հմտությամբ, որ դժվար է պնդել, թե հեղինակն այդ կնոջը տեսե՞լ է իրականում, թե՝ ոչ։ Թերևս որևէ գեղեցկուհի վայրկենաբար այնքան է հմայել բանաստեղծին, որ նրան է վերագրել բոլոր իդեալական իր պատկերացումները, որոնք նա կրել է իր հոգում, փայփայել ու սիրել։ Երրորդ հասակում նա այդ բոլորը նյութականացնում է ընդամենը մեկ վայրկյան տեսած գեղեցկուհի տիկնոջ մեջ։ Ուշագրավն այստեղ ոչ թե կինն է, որի արտաքինով զմայլվել է հեղինակը, այլ իր երազանքների մարմնավորումը, որն իր նկարագրի ներդաշնակությամբ բացահայտում է գրողի հոգու ողջ հարստությունը։ Տառապանքների բովով անցած Իսահակյանի հոգին, այնուամենայնիվ, կյանքի վայելքը մեկ վայրկյան ապրում է այդ կնոջով. «Պատահաբար նրա հայացքը մի պահ հանգչեց իմ վրա, և հոգիս տերևի պես դողաց այդ հայացքի ներքո...» (Հ, 365)։ Օրագրի «Անծանոթ կինը» վերնագրով այս գրառումը պայմանականորեն կարելի է բաժանել երեք մասի. հեղինակը նախ նկարագրում է այդ կնոջ ներդաշնակ գեղեցկությունը։ Կնոջ կազքին կանգնած էր նրա ամուսինը, և ահա այստեղ էլ գլուխ է բարձրացնում անցած տասնամյակների երկու հասակներում անձնական վիրավորանք կրած նրա տղամարդկային մեծ սերն ու «ես»-ը. «Նրա մոտ կանգնած էր մի այր, նրա ամուսինը... Այդ մարդը—իմ ոսոխն է, բոլոր մարդկանց մեջ իմ միակ թշնամին, իմ արյունը ծծողը, աշխարհի մեջ միակ չարը, դևը, բոլոր իմ ատելության կենտրոնացումը» (Հ, 365)։ Գեղեցկուհու ամուսնուն գրողը ներկայացնում է որպես չարի մարմնավորում՝ նյութականացած իր երազների դիցուհու կողքին, որին նա աստվածացնում է. «Ամբողջ տիեզերքը չքանում, լուծվում է, չէանում է իմ առաջ, և մնում է այս հոգեկան էակը-աստվածությունը...» (Հ, 365)։ Հանուն այս աստվածության էլ նա պատրաստ է ասպետի նման կռիվ մղել նրա «հոգեշունչ աչքերին» տիրանալու համար։ Այս երազանքի իրականացման համար էլ նա պատրաստ է ամեն ինչի. «Ի՞նչ եմ ուզում նրանից—ոչի՜նչ։ Ոչի՜նչ այն ամենից, ինչ որ ուզում են մարդիկ կանանցից» (Հ, 365)։ Կյանքի թոհուբոհի, քաղաքի աղմուկ-ժխորի մեջ էլ գրողը կորցնում է իր երազների դիցուհուն՝ Աստվածուհուն։ Երրորդ հասակում արդեն այս կորուստը խորհրդանիշն էր կյանքի ունայնության։ Քաղաքի աղմուկի մեջ իր երազ-իդեալը կորցրած Իսահակյանը, կորցրած նաև հույսը, որ որևէ տեղ կարող է հանդիպել ու գտնել նրան, մի

նախադասությամբ ասես ամփոփացնում, ավարտում է իր վերապրածը. «Ո՞վ էր, որտեղի՞ց եկավ, և ո՞ւր գնաց» (Հ, 366)։ Տրված ոչ մի հարցի պատասխանը չգտնելով, եզրահանգում է՝ Թշվառություն։ Սա սեփական հոգեվիճակի հեղինակային գնահատումն էր միաժամանակ՝ երրորդ հասակի հետագա ողջ ապրելիք տարիների ակնկալությունների ամփոփումով։ Անծանոթ կնոջ տեսիլը Իսահակյանի համար տարօրինակ հրաժեշտ էր իր իդեալին, որին մարմնավորելով անծանոթ կնոջ կերպարում, ասես ազատվում է այդ մեծ խորհրդից։ «Անծանոթ կինը» գրառման հեղինակն ասես, խոստովանահոր մոտ եկած տղամարդն է, որի հոգին չի աղարտվել մարմնական վայելքներով հարուստ Եվրոպական քաղաքներում։ Դա նրա անբասիր, մաքրամաքուր հոգու խոստովանանքն է՝ երրորդ հասակի սկզբում։

Այս մեծ սիրո վերհուշը ողջ կյանքում ուղեկցել է բանաստեղծին՝ իբրև անանց կարոտի ու տենչանքի արտահայտություն[17]։ Թվում է, կյանքի վերջին երեկոին, որ Շ. Մատակյանի մահվան օրն էր (հոկտեմբերի 16), Իսահակյանի վերջին բանաստեղծությունը սիրո և հրաժեշտի խոսքեր էին՝ ուղղված սիրած կնոջը.

Ինձ տիրեիր որպես թե
Լինեի մեռած.
Անունս հնչեր քեզ՝
Հեռավոր մի հուշ...[18]

Շուշիկի հանդեպ տածած այս մեծ սիրո զգացմունքները Իսահակյանի ստեղծագործություններում վերածվեցին բանաստեղծությունների, պոեմի, լեգենդի, արձակ էջերի, փիլիսոփայական ինքնախոստովանանքի։ Այս վերջինում արձանագրված սիրո ու մորմոքի զգացմունքները երբեմն վերանալով որոշակիությունից, դառնում են ընդհանրապես կին-արարածի, նրա անհատական մարդկային նկարագրի քննությանը վերաբերող մտորումներ կամ խտացումներ, ուր մի քանի նախադասության մեջ գրողը ամփոփում-ամբողջացնում է իր ապրած զգացմունքների հզորությունը, սիրո վեհացնող սրբագործող ուժի ներգործությունը։ Հոգևոր խաղաղ ու պայծառ պահերի ծնունդ այս արծարծումները, սակայն, չեն մեղմում «Հիշատակարանում» իշխող տոնը՝ վիրավոր, արնածոր սրտի վիրավորանքն ու ծառացումը. «...միշտ առաջին սիրուս լույս—պատկերը աչքիս առաջ, ձայնը ականջիս մեջ, և սրտիս մեջ երազ ու վիշտ, երգ ու արցունք...» (Հ, 311)։

ЛЮБОВЬ АВ. ИСААКЯНА В «ДНЕВНИКАХ»

М. Г. ЗАКАРЯН

Резюме

Большая любовь и героиня поэзии Ав. Исаакяна—Шушаник Матакян. Эти переживания вылились в стихи, поэмы, легенды, прозу, философскую исповедь. Его «Дневники» и стихотворения своими настроениями и лексическим образным строем перекликаются с мировой любовной лирикой. Исаакян представляет любимую женщину как свою половину. И уже в таком ракурсе отношения «Я»—«Я» предстают в дневнике не в форме монолога, а диалога, в котором он передает своей половине Шушаник—я мысли и думы.

Любовная тема в произведениях Исаакяна с точки зрения чисто человеческих, дружеских чувств сопоставима с сонетами Шекспира. Писателю импонируют также образное мышление поэзии Гейне, его бунтарский дух.

[17] Համաշխարհային պոեզիային հայտնի է սիրած էակների դիմագծերը նրանց երեխաների մոտ որոնել-գտնելու մոտիվը։ Այս առումով եզակի բանաստեղծություն է Բայրոնի՝ Մերի Չավորտին նվիրված «Բարի՛, ես երջանիկ եմ» բանաստեղծությունը (The complete work of Lord Byron. Paris. 1835, p. 847)։ Իսահակյանին, սակայն, սիրած կնոջ մայրական սկզբի գովերգման զգացում բնորոշ չի եղել։

[18] ԳԱԹ, Իսահակյանի ֆ, 73—II։